

ՄԱՆՈՒԿՆԵՐ

Ով մանուկներ ծիլ ու բողբոջ,
Յոյսն ու երազ մարդկության ողջ,
Սիրտըս կըրակ կուլայ ձեր հետ.
Ձեզ կը լափէ սով, հուր, աղէտ:

Անխիղճ մեծեր՝ արիւնարբու,
Եւ խելագար, եւ գինարբու,
Կըրակ կուտան իրենց իսկ տան,
Յանուն կրօնի, ազատութեան:

Ինչ անիրաւ աշխարհ է այս.
Սովալըլուկ ձեր աչուկներ,
Լեցուն՝ կեանքով, հըրապոյրով,
Կը պաղատին՝ սէր, յոյս, երազ . . .:

Միայն դարձո՛վ՝ Աստուածաշունչ
Դրախտին, մօր սիրտն զաւկին տայ հունչ,
Տիեզերքին նորաստեղծեալ
Բանայ ճամբան երանական
Դէպ՝ բազմազգեան եղբայրութեան:

Ով մանուկներ ծիլ ու բողբոջ,
Դո՛ւք՝ ձայնեցէք մարդկության ողջ:

Թ.Ա.Մ.